


## ԻՆՏԵԼԵԿՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ Հ.ԱՅՁԵՆԿԻ ԹԵՍՏԸ

Հայտնի հոգեբան Հանս Յուրգեն Այզենկը (Hans Jürgen Eysenck) մշակել է ինտելեկտի կոեֆֆիցենտի որոշման աշխարհի երևի թե ամենահայտնի և լայն տարածում գտած թեստը: Այն բաղկացած է 5 ենթաթեստերից և պարունակում է իր մեջ ընդհանուր ինտելեկտի գնահատման բառային, թվային և պատկերավոր տարրեր, որոնք էլ իրենց հերթին ձևակերպված են առանձին խնդիրների, գլուխկոտրուկների տեսքով (տես օրինակը՝ Նկար 1): Հարկ է նշել նաև որ ժամանակի սղության դեպքում կարելի է կատարել նաև միայն 4-րդ և 5-րդ ենթաթեստերը:

Նկար 1. Հատված Այզենկի ինտելեկտի թեստից

Գրեք բացթողնված թվերը.					Գրեք բացթողնված տառերը.				
5	10	10	17	?					
8	7	13	14	?					

Նշված տարբերակներից ընտրեք մեկը.



Այզենկի IQ-թեստը նախատեսված է 18-ից 50 տարեկան անձնաց ինտելեկտուալ կարողությունների գնահատման համար, որոնց կրթական մակարդակը պետք է լինի ոչ պակաս քան միջնակարգ: Թեստն ունի 0-ից 180 բալ գնահատման սանդղակ:

Թեստի հրահանգը բերվում է ստորև.

«Հարգելի հետազոտվող, Դուք ունեք 30 րոպե ամեն մի ենթաթեստը կատարելու համար: Թեստում Դուք կգտնեք բազմաբնույթ հարցեր որոնք իրենցից ներկայացնում են բառային, թվաբանական կամ պատկերավոր խնդիրներ-գլուխկոտրուկներ: Մի շտապեք, սակայն հիշեք նաև որ ժամանակը սահմանափակ է:


Նշում. Բառային խնդիր-գլուխկոտրուկներում հանդիպող կետերը ցույց են տալիս բաց թողնված տառերի քանակը»:

### Արդյունքների գնահատումը և եզրակացություններ

Թեստավորման արդյունքների գնահատումը իրագործվում է համապատասխանաբար Նկար 2 և Նկար 3 նկարագրված կանոնների: Այնուհետև բոլոր ենթաթեստերով ստացված

արդյունքներից հաշվարկվում է թվաբանական միջինը. դա էլ հենց ինտելեկտի կոեֆֆիցենտի քանակական ցուցանիշն է:

Նկար 2. 1-ին, 3-րդ և 4-րդ ենթաթեստերով ստացված բալերի հաշվարկը



Նկար 3. 2-րդ և 5-րդ ենթաթեստերով ստացված բալերի հաշվարկը

